# ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),
ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՐԻԻՆ (*ԼՈՆԴՈՆ*),
ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ՝ (*ՏԱԼԼԻՆ*),
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*)

Մեր Տիրոջ և Փրկչի Ծննդյան սուրբ ավետիսով կողջունենք Ձերդ Սրբությունը, եղբայրական ամենաջերմ մաղթանքներով, որ Աստված Ձեզ պարգևե հովվապետության երկար տարիներ քաջառողջությամբ և Ձեր սուրբ գործոց հաջողությամբ, ի պայծառություն Ձեր Ս. Եկեղեցվույն և ի մխիթարություն Ձեր հավատացյալ ժողովրդին:

Թող զորանա և ծաղկի Քրիստոսի Ս. Եկեղեցին, աշխարհին և բոլոր հուսացյալ սրտերում բաշխելով սեր և խաղաղություն:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅԻՆ

ՄՈՍԿՎԱ

Անկեղծորեն շնորհակալ ենք Ծննդյան և ամանորի առթիվ Ձեր ուղարկած շնորհավորանքի համար: Փոխադարձաբար շնորհավորելով Ձեզ, ի սրտե մաղթում ենք Ձերդ Սրբազնությանը քաջառողջություն, երկար կյանք և գործոց հաջողություն՝ հօգուտ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ծաղկման:

Ձեր եղբայր ի Քրիստոս,

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Հատկանշական է Ս. Ավետարանի խոսքը, որ Քրիստոսի Ս. Ծննդյան ավետիսը առաջինը լսեցին հովիվները և միախորհուրդ որոշեցին իսկույն գնալ և երկրպագել մարդկության մանկացյալ Փրկչի առաջ և փառավորել նրան:

Քաղցր է այժմ էլ մեզ՝ Քրիստոնեական Եկեղեցու հովիվներիս, հիշել Նրա Ս. Ծնունդը և խոսել միմյանց հետ Նրա փառքի մասին:

Ուրախությամբ հաղորդակից եմ լինում Ձերդ սիրեցյալ Սրբության մաղթանքներին՝ մեզ համար ընդհանուր և պայծառ այս տոնին և աղոթում եմ առ Աստված աշխարհի խաղաղության և մարդկանց միջև հանության համար, և նոր տարվա սեմին՝ Նրա շնորհաց գեղման և Ձեր կենաց արևշատության համար:

Եղբայրական Քրիստոնեական սիրով առ Ձեզ,

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը Քրիստոսի Ծննդյան ուրախալի տոնի և նոր տարվա առթիվ: Աղոթում եմ Աստուծո նորածին Որդուն, որպեսզի Նա նոր տարում Ձերդ Սրբությանը բաշխի ամենայն երջանկություն և մխիթարություն՝ ողջ աշխարհում խաղաղության ամրապնդման և Ձեր հոգածությանը հանձնված հայոց Սուրբ, հնագույն և փառապանծ Եկեղեցվո ծաղկման համար բարեբաստիկ պայմաններում:

Անկեղծորեն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս,

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ

ԹԲԻԼԻՍԻ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս.

«Աստված, որ տարբեր ժամանակներում և զանազան ձևերով անցյալում խոսեցավ հայրերին մարգարեների միջոցով, այս վերջին օրերս մեզ հետ խոսեց Իր Որդու միջոցով»:

Սրտագին ուրախությամբ է, որ ամեն տարի քրիստոնյաները խորհրդածում են Աստվածորդու ծննդյան մասին և քրիստոնեական ողջույն են հղում իրենց ի Հիսուս Քրիստոս հավատացյալ եղբայրներին: Աշխարհը ամեն օր հայտնում է փրկության իր պահանջը այն եսասեր և նեղ շահերից, որոնք այնքան կռիվ և վիշտ են պատճառում: Գիտության առաջադիմությամբ և Աստուծո նյութական տիեզերքի հրաշքների հայտնությամբ, հաճախ առաջ է գալիս վախի անուրը, որովհետև մարդկանց պակասում է հոգեկան ուժ իրենց գյուտերը օգտակար և բարերար նպատակների համար միայն ծառայեցնելու: Երբեք չեն եղել աշխարհում այնքան պատսպարյալներ որքան այսօր: Մարդու անմարդկայնությունը մարդու նկատմամբ շատ հազվագյուտ դեպքերում է, որ եղել է այսքան բացահայտ:

Այս խավարի միջից գալիս է լույսը մի փոքրիկ Մանկան, որը ծնվել է մսուրի մեջ: Եսասիրության գիշերվա միջից գալիս է աստվածային սիրո արեգակի լույսը, բերելով արշալույսը նոր հույսի և նոր հնարավորության: Տիրոջ այս օրվա առթիվ շնորհավորում եմ Ձեզ, սիրելի Եղբայր, և միացնում եմ իմ բարեմաղթությունները Ձերինին: Որպես քրիստոնյաներ, մենք պետք է լինենք երկրի աղը, և ես կաղոթեմ, որ Ավետարանի մեր եղբայրությունը կարենա օգնել փրկելու մարդկանց և աշխարհը իրենց մեղքերից և բանալու նրանց աչքերը, որպեսզի տեսնեն փրկությունը, որ Աստված բերում է մեզ:

Խնդրում եմ, սիրելի Եղբայր, ընդունել իմ եղբայրական ողջույնները: Ես աղոթում եմ Ձեզ և Ձեր Եկեղեցու համար, միանալով Ձեզ և բոլոր երկնայիններին հրեշտակների երգի միջոցով, «Փա՜ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ձեր անկեղծ և սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ՋԵՈՖՐԻ

ԼՈՆԴՈՆ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ի սրտե շնորհակալություն ենք հայտնում Ձեր եղբայրական ողջույնի և բարեմաղթությունների համար մեր Փրկչի՝ Քրիստոսի Ծննդյան տոնի առթիվ:

Աղոթում ենք առ Աստված, որ երկնային շնորհները և օրհնությունը իջնեն Ձերդ Սրբության, Ձեր Եկեղեցու հոգևոր դասի և հավատացյալների վրա և նոր տարին Ձեր բոլոր գործերի հաջողության պսակումը բերի, աշխարհի խաղաղության և ողջ մարդկության ու ժողովուրդների եղբայրության հետ միասին:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ձերդ Վեհափառություն.

Բեթղեհեմի այրը ներկայացնում է զարմանալի պատկեր համաշխարհային պատմության մեջ: Նա այլակերպվեց երկնային օթևանի, թագավորի մսուրի և գահի և այնտեղ բարեհաճեց դրվել Ինքն Աստված, որպես անպաշտպան երեխա, փաթաթված խանձարուրի մեջ:

Ո՞վ կարող է հավատալ, որ աշխարհի այդ ամենակարող Տերը, «Ո հայի յերկիր և տայ դողալ սմա, մերձեսցի ի լերինս և ծխեսցին» (Սաղմոս ՃԳ, 32):

Որքա՜ն անճանաչելիորեն խոնարհվեց Աստված, որպեսզի ցույց տա մեզ խոնարհության ճանապարհը դեպի կորսված դրախտը:

Օ՜, երբ մարդկությունը գնահատեր Փրկչի աստվածային խոնարհությունը, որքա՜ն շատ օրհնյալ արդյունքներ կառաջանային դրանից:

Ս. Կույս Մարիամից ծնված Աստվածորդին թող գթա մեղավոր աշխարհին և թող տա Իր երկնային խաղաղությունը, «Զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն աստուածպաշտութեամբ և սրբութեամբ» (Ա Տիմ., Բ 2):

Շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը իմ և Բուլղարիայի Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Սինոդի անունից: Մենք ցանկանում ենք Ձեզ ուրախ երկարակեցություն, Ձեր օրհնյալ միաբանության՝ Աստուծո ողորմությունը, Ձեր երկրի հավատացյալներին՝ բախտավորություն և հոգու փրկություն և համայն աշխարհին՝ օրհնյալ խաղաղություն:

Եղբայրաբար համբուրելով Ձեզ ի Տեր, մնում ենք սիրով Ձեր եղբայրակից և լծակից,

ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻՈ
ԿԻՐԻԼ

ՍՈՖԻԱ

---

ПА-1009
ԱԿԱԴԵՄԻԱ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ծննդյան տոների առթիվ Ձերդ Սրբության պատգամը մեծ ուրախություն պատճառեց մեզ: Ի սրտե շնորհակալ ենք եղբայրական բարեմաղթությունների և ջերմ շնորհավորանքի համար: Փոխադարձաբար շնորհավորելով Ձեզ, ի սրտե ցանկանում եմ, որ Քրիստոսի ծննդով բաշխված երջանկություն ու բարիքները առատորեն տրվեն Ձերդ Սրբությանը, Ձեր հավատացյալ հոտին և Հայ Առաքելական Եկեղեցուն:

Թո՛ղ գալիք նոր տարում քրիստոնեական բոլոր եկեղեցիները և աշխարհի բոլոր ժողովուրդները հասնեն խաղաղության և փոխըմբռնման:

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ–ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՅԱՆ ԿԻՅՎԻՏ

ՏԱԼԼԻՆ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Փոխադարձաբար և սրտագին կերպով շնորհավորում եմ Ձերդ Սրբության նոր տարին և մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան տոնը: Ընդունեցեք իմ ամենաջերմ բարեմաղթությունները. ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և հոգևոր ուրախություններով լի բազում տարիների կյանք, Ձեր բարի գործոց կատարյալ հաջողություն՝ հօգուտ Հայկական հինավուրց Եկեղեցու և ամբողջ քրիստոնեության:

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ–ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ՌԻԳԱ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս.

Անասելի ուրախությամբ են լցված մեր սրտերը ներկայիս, երբ հոգեպես տեսնում ենք Փրկչի ծնունդը, Բեթղեհեմի մսուրի մեջ պառկած:

Հրեշտակային այն օրհներգը, թե «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ., Բ 14) հնչում է մեր սրտերում իբրև լույս, ավետելով մեղավոր մարդկության հաշտեցումն Աստուծո հետ, որ է սիրո, ողորմածության և մեր փրկության աղբյուրը:

Ողջունում եմ Ձեզ, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, Փրկչի Ծննդյան մեծ տոնի և ամանորի առթիվ:

Ընդունեցեք իմ ամենաանկեղծ բարեմաղթությունները Ձեր և Ձեր հոտի քաջառողջության, բարեկեցության և երջանկության համար, ի փառս Աստուծո, ի հաստատումն աստվածային պատգամների՝ ժողովուրդների միջև եղբայրական սիրո և երանելի խաղաղության համար:

ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՈԴԻ ԱՆԴԱՄ,
ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆԻԿՈԼԱՅ

ՄՈՍԿՎԱ